



Arménien

**P.R.I.P.I**

Գախտած բնակիչների  
ինտեգրացման տարածքային  
Ծրագիր

**C.A.S.N.A.V**

Նոր ժամանած և Շրջագայող  
Երեխաների ուսումնառու-  
թյան կազմակերպման  
Ակադեմիական Կենտրոն

## ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

*Ֆրանսիա նոր ժամանած երեխաներին  
և  
ընտանիքներին ընդունելու փաստաթուղթ*

### ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՊԱՏԱՄԽԱՆՈՒՄ Է ՁԵՐ ՀԱՐՅԵՐԻՆ

- ◆ Ինչպե՞ս գրանցեմ իմ երեխային դպրոց, քոլեջ, լիցեյ:
- ◆ Իմ երեխան դեռ չի խոսում ֆրանսերեն: Ի՞նչ է առաջարկում դպրոցը, քոլեջը, լիցեյը:
- ◆ Ինչպե՞ս է կազմակերպված դպրոցական համակարգը Ֆրանսիայում:
- ◆ Ովքեր ե՞ն ամենակարևոր անձինք դպրոցում, քոլեջում, լիցեյում:
- ◆ Դասերից դուրս իմ բնակավայրին մոտ ի՞նչ կազմակերպություն կարող է օգնել իմ երեխային:

◆ Ինչպե՞ս գրանցել իմ երեխային դպրոց, քոլեջ, լիցեյ:

	Մանկապարտեզ	Տարրական դպրոց	Քոլեջ և լիցեյ
<b>Գրանցման պայմանները</b>	Մանկապարտեզը ընդունում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ 3 տ-ին լրացածներին(2տ-ից ZEP, ZUS):	<b>Նախապատրաստական դասարան C.P.</b> գնալու համար Ձեր երեխան պետք է <b>ընթացիկ տարվա մինչև դեկտեմբերի 31-ը 6տ</b> -ը լրացած և ազատ տեղերի առկայության պայմաններում:	Եթե Ձեր երեխան ուսուցման երկրորդ աստիճանի տարիքին է, նա պետք է նախ հանդիպի <b>մասնագիտական կողմնորոշման գծով խորհրդականին</b> , որը նրա հետ կանցկացնի տարբեր տեստեր, որոշելու համար երեխայի գիտելիքների և ունակությունների մակարդակը:
<b>Գրանցման ընթացքը</b>	Ձեր երեխային դպրոց գրանցելու համար պետք դիմել Ձեր բնակության վայրի <b>քաղաքապետարան</b> որը երեխային կգրանցի: Այդ գրանցման վկայականը պետք է ներկայացնել այնուհետև դպրոցի տնօրենին հետևյալ փաստաթղթերի հետ միասին՝	Նախ և առաջ դիմել <b>Ժողկրթբաժին</b> , որը հանդիպման օր կնշանակի Ձեզ ամենամոտ <b>Կ.Ի.Օ. (Կողմնորոշման և Ինֆորմացիայի Կենտրոն)</b> խորհրդականի հետ: Ժողկրթբաժնի տեսուչը այնուհետև Ձեր բնակավայրի և առկա ազատ տեղերի պայմանով երեխային կուղարկի որևէ ուս. հաստատության իր գիտելիքներին համապատասխան դասարան: Որից հետո պետք է հնարավորին շուտ ներկայանալ լիցեյի կամ քոլեջի տնօրենին:	
<b>Պահանջվող փաստաթղթերը</b>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Երեխայի կամ ծնողի անձը հաստատող փաստաթուղթ կամ տնային գրքույկը</li> <li>➢ Հնարավորության դեպքում նախկինում ունեցած որևէ ուսումնական փաստաթուղթ               <ul style="list-style-type: none"> <li>➢ Տեղեկանք բնակավայրից</li> </ul> </li> </ul> <p>Բժշկից տեղեկանք, որ երեխան ստացել է իր տարիքին համապատասխան պարտադիր բոլոր պատվաստումները, և որ նա առողջական տեսանկյունից ընդունակ է ապրել հասարակության մեջ:</p>		

◆ Ինչպե՞ս է ուսումնական համակարգը Ֆրանսիայում  
Նախ և առաջ պետք է իմանալ հետևյալը՝

**Ֆրանսիայում ուսումը 6-16 տարեկանը պարտադիր է:**

Բայց երեխան կարող է հաճախել դպրոց 3 տարեկանից և 16 տարեկանը լրացած երիտասարդը կարող է շարունակել ուսումը:




**Դպրոցը հանրակրթական է, աշխարհիկ և անվճար:**

Գոյություն ունեն մասնավոր դպրոցներ և քոլեջներ, ուր ուսումը վճարովի է:

Ուսումնական հաստատություններում աղջիկները և տղաները միասին են սովորում:

**Ուսումնական գործընթացի նկարագրությունը**

**Կարողալ սյունակի ներքևից դեպի վերև**

<p><b>Բարձրագույն կրթություն</b></p> 	<p><b>Համալսարաններ կամ Բարձրագույն Դպրոցներ</b></p>	<p>ԲԱԿ-ից հետո բարձրագույն կրթությունը կարող է տևել 2-ից 8-ը տարի ըստ ընտրված դիպլոմի: Որպեսզի կարողանաք շարունակել սույն կրթությամբ, պետք է ներկայացնել Ձեր երկրում ձեռք բերված դիպլոմները և դպրոցական վկայականները:</p>			
<p><b>Երկրորդ աստիճանի կրթություն 2<sup>o</sup></b></p> 	<p><b>Հանրակրթական, Տեխնիկական կամ Մասնագիտական Լիցեյներ</b></p>	<p>Ավարտական դասարան <b>հանրակրթական կամ տեխնիկական ԲԱԿ-ի համար</b></p>	<p><b>Մասնագիտական ԲԱԿ (2 տարով)</b></p>	<p>Ըստ ընտրված ճյուղի, լիցեյիում ուսումը կարող է տևել 2տարի, 3տարի կամ 4 տարի:</p>	
	<p><b>ՔՈԼԵՋ</b></p>	<p>1-ին</p>	<p><b>BEPL կամ CAP</b></p>	<p>Այս 4 տարիների ուսումը ավարտվում է քննությամբ քոլեջների վկայականի ձեռքբերումով:</p>	
<p><b>Տարրական կրթություն 1<sup>o</sup></b></p> 	<p><b>ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ</b></p>	<p><b>C.M.2</b> <b>C.M.1</b> <b>C.E.2</b> <b>C.E.1</b> <b>C. P.</b></p>	<p><b>3-րդ ցիկլ</b></p>	<p><b>10 – 11տ</b> <b>9 -10տ</b> <b>8 – 9տ</b></p>	<p>Տարրականի վերջում քննություններ չկան</p>
	<p><b>ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉ</b></p>	<p><b>Բարձր</b></p>	<p><b>2-րդ ցիկլ</b></p>	<p><b>7 - 8 տ</b> <b>6 - 7 տ</b> <b>5 - 6 տ</b></p>	
		<p><b>Միջին մակարդակ</b></p>	<p><b>1-ին ցիկլ</b></p>	<p><b>4 - 5տ</b> <b>3 - 4 տ</b> <b>2 - 3 տ</b></p>	
		<p><b>Սկսնակ</b></p>			

**◆ Իմ երեխան չի խոսում ֆրանսերեն:**

**Ի՞նչ է առաջարկում դպրոցը, քոլեջը, լիցեյը:**

Այն երեխաները, որ դեռ չեն խոսում ֆրանսերեն, կամ դեռ լավ չեն տիրապետում գրավոր և բանավոր խոսքին, դպրոցական հաստատությունների մեծ մասում հատուկ միջոցներ են ձեռնարկվում:

Հաճախելով իր տարիքին և ունակություններին **համապատասխան դասարաններում**, ֆրանսերենին չտիրապետող երեխաները խմբավորվում են **շաբաթական մի քանի ժամով հատուկ դասարաններում**.

- **CLIN** (*սկսնակ դասարան*) կամ **CRI** (համապատասխան մակարդակին հասցնելու դասարան) տարրական դպրոցում:

- **CLA** (*ընդունող դասարան*) կամ **Dispositif FLE** (Ֆրանսերենը որպես Օտար Լեզու) քոլեջում կամ լիցեյում:

Այս հատուկ դասերը նպատակ ունեն երեխաներին հնարավորություն տալ արագ հասնել **հաջողությունների դպրոցում** և **այնտեղ իրենց լավ զգալ**: Այստեղ նրանք սովորում են ոչ միայն ֆրանսերեն, այլ նաև անհրաժեշտ հանրակրթական առարկաները, որպեսզի հասնեն հաջողությունների բոլոր առարկաների գծով: Յուրահատուկ կազմակերպություն և համապատասխան միջոցառումներ են առաջարկվում նոր ժամանած երեխաներին՝ նրանց ինտեգրացմանը նպաստելու համար: Եթե դուք գյուղական վայրում եք ապրում, Ձեր երեխային օգնելու համար CASNAV-ի հովանավորությամբ կազմակերպվում են դպրոցական դասարանների օգնությամբ անհատական դասեր:

**◆ Որո՞նք են ամենակարևոր անձինք դպրոցում, քոլեջում, լիցեյում**

**Սոցիալական հարցերով զբաղվող անձը (ասիստանտ սոցիալ)**  
**Տարրականում**

Տարրական դպրոցում չկա Ազգային Կրթության ասիստանտ սոցիալ: Պրոբլեմի դեպքում դիմել բնակության վայրի սոցիալական ծառայություններին:

**Քոլեջում կամ լիցեյում**

Ասիստանտ սոցիալը Ձեր ընտանիքի և երեխային լսելու (տեղեկությունների, պրոբլեմ լուծելու, գրուցելու, ֆինանսական դժվարությունների...) համար է: Ժամադրվեք նրա հետ: Նա աշխատում է հաստատության ողջ անձնակազմի հետ և իրավունք չունի ձեր գաղտնիքը կիսել ոչ մեկի հետ:

**Կողմնորոշող խորհրդատու հոգեբանը ( C.O.P )**

Քոլեջում և լիցեյում նա ունի հերթապահության օր և Ձեզ կտեղեկացնի հնարավոր ուսման և արհեստների մասին: C.O.P.-ի հետ հանդիպումը երեխային թույլ կտա գնահատելու իր հնարավորությունները, նպատակասլացությունը և ըստ այդմ կողմնորոշվել:

**Ուսումնական գծով գլխավոր խորհրդականը (C.P.E)**

Վերահսկիչների օգնությամբ C.P.E-ը պատասխանատու է քոլեջում և լիցեյում աշակերտի դպրոցական կյանքի և ընթացքի համար: Նա զբաղվում է ուշացումներով և բացակայություններով: Նա դաստիարակչական գծով կարևոր օղակ է Ձեր և Ձեր երեխայի համար:

**Ազգային կրթության բուժքույրը Տարրականում**

Երեխայի ուսուցիչը Ձեր խնդրանքով դպրոցում կարող է կազմակերպել ձեր հանդիպումը բուժքրոջ կամ դպրոցական բժշկի հետ: Առաջին իսկ հնարավորության դեպքում բժիշկը կընդունի երեխային նրա առողջական հետազոտության համար:

**Քոլեջում կամ լիցեյում**

Քոլեջում բուժքույրը աշխատում է շաբաթվա որոշկի օրեր, իսկ լիցեյում ամեն օր՝ առաջին բուժօգնության համար: Երեխան կարող է խոսել իր մտահոգությունների, ինչպես նաև առողջական հոգսերի մասին (պատվաստումների կամ խորհուրդներ առողջության, սննդի, հիգիենայի...մասին): Ընթացիկ ուս.տարվա ընթացքում երեխան կարող է անցնել բժշկական հետազոտություն: Բուժքույրը կարող է հանդիպել ընտանիքի հետ: Նա մասնագիտական գաղտնիքը տարածելու իրավունքը չունի:

**Դասղեկը քոլեջում և լիցեյում**

Նա երեխաների նախընտրելի ունկնդիրն է, կոնֆլիկտի դեպքում միջնորդը, դասատուական անձնակազմի կորդինացողը: Դասղեկի հետ է, որ ընտանիքը առաջին հերթին հանդիպելու է: Ժամադրվեք նրա հետ խոսելու համար դասարանում ծագած որևէ պրոբլեմի, Ձեր երեխայի հաջողությունների և դժվարությունների մասին:

**Հնդունելությունը դպրոցներում, քոլեջներում և լիցեյներում:**

Մի երկմտեք հանդիպել **ուսուցիչների, ինչպես նաև դպրոցի տնօրենի, ուսումնական հաստատությունների (քոլեջի, լիցեյի) ղեկավարների, դպրոցական բուժքույրերի և բժիշկների, սոցիալական հարցերով զբաղվող անձանց, ախտահարող սոցիալ կրթության հարցերով զբաղվող խորհրդականի և մասնագիտական կողմնորոշմամբ զբաղվող խորհրդականի** հետ:

**◆ Դասերից դուրս իմ բնակավայրի մոտ գտնվող ի՞նչ կազմակերպություն կարող է օգնել իմ երեխային:**

Ավելի ու ավելի շատ **կազմակերպություններ** են ստեղծվում թաղերում, որոնք աշխատում են **դպրոցի, քոլեջի և CASNAV-ի** հետ համատեղ: Ըստ իրենց միջոցների այդ կազմակերպությունները դասերից հետո երեխաներին առաջարկում են «**արտադասարանական պարապմունքներ**» կամ ֆրանսերեն լեզվի ուսուցման և երեխայի ինտեգրացմանը նպաստող միջոցառումներ:

Պետք է դիմել ուսուցիչներին, դպրոցի տնօրենին կամ քոլեջի ղեկավարին: Նրանք Ձեզ կմատնանշեն այն քայլերը, որ պետք է անել Ձեր երեխային գրանցելու համար այդ կազմակերպություններում:

**Լրացուցիչ տեղեկություններ կապված Ձեր երեխայի դպրոց հաճախելու հետ**

Ձեր բնակավայրի մոտ գտնվող կազմակերպությունը կամ ուսուցիչները կարող են Ձեզ օգնել հանդիպել Ժողկրթբաժնի, Ինսպեկցիոն Ակադեմիա, կամ **C.A.S.N.A.V-ի**, Նոր Ժամանած երեխաների ուսումնառությունը հեշտացնելու Ժողովրդական Կրթության, համապատասխան ծառայության հետ:

**Աղդենի Ժողկրթբաժին :**

**03 24 59 71 50**

**Մադնի Ժողկրթբաժին :**

**03 26 68 60 00**

**Օբի Ժողկրթբաժին :**

**03 25 76 22 22**

**Օտ-Մադնի Ժողկրթբաժին :**

**03 25 30 51 51**

**C.A.S.N.A.V**

Նոր ժամանած և շրջագայող երեխաների ուսումնառության  
Ակադեմիական Կենտրոն

**03 26 05 99 51**

Site : <http://www.ac-reims.fr/casnav/>